ՄԱՍ 1
PART 1

# ԱՄՓՈՓՈՒՄ
# SUMMARY

# ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

# DEMOGRAPGHIC SITUATION IN THE REPUBLIC OF ARMENIA

**Բնակչության թվաքանակը, կազմը և տեղաբաշխումը**

Population size, structure and distribution

✓ Մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշի հաշվարկի հիմքը 2011թ. մարդահամարի տվյալներն են, որոնք արդիականացվել են հաշվետու տարվա բնական հավելաճի և միգրացիայի մնացորդի ցուցանիշներով: Ընդ որում, բնակչության միգրացիայի վերաբերյալ (հաշվառում /հաշվառումից հանում) ՀՀ ոստիկանությունից ստացված վարչական տվյալները ենթարկվել են վերագնահատման (վիճակագրական ճշգրտման), հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք չեն ընդգրկում բնակչության տեղաշարժերն ամբողջապես (քանզի մարդիկ հիմնականում իրենց տեղաշարժերի մասին չեն տեղեկացնում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն)՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով ստացված միգրացիայի գնահատականները:

✓ The base for the count of the permanent population figures are the data from the RA Population Census 2011, which are updated with the indicators on natural movements (births minus deaths) and net migration of the reference year. Thus, the data on migration (registration/ deregistration) obtained from the RA Police were re-estimated (statistically adjusted), given the fact that these data do not completely cover population movements (as people mostly move (migrate) without informing about it the Passport and Visa Department of RA Police) based on the assessment of the migration estimates obtained by the results of Integrated Living Conditions Survey from the previous year.

✓ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 2 959.7 հազ. մարդ և 2018թ. տարեսկզբի համեմատ նվազել է 5.6 հազ. մարդով: 2020թ.-ի տարեսկզբին քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմել է 63.9%, իսկ գյուղականը՝ 36.1%:

✓ The number of permanent population of the Republic of Armenia comprised 2 959.7 thousand person, as of the beginning of 2020, recording a decrease by 5.6 thousand compared to the 1, January 2019. As of the beginning of 2020 the shares of urban and rural population were 63.9% and 36.1%, respectively.

✓ 2020թ. տարեսկզբին ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 47.2%-ը կազմել են տղամարդիկ, իսկ 52.8%-ը՝ կանայք: Բնակչության միջին տարիքը 2020թ.-ի տարեսկզբի դրությամբ կազմել է 36.9 տարի, տղամարդկանց համար՝ 34.8, իսկ կանանց համար՝ 38.8 տարի:

✓ Men and women comprised 47.2% and 52.8%, respectively, of the permanent population in Armenia, as of the beginning of 2020. The average age of the population was 36.9, for males 34.8 and for females 38.8, as of the same date,

✓ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 21.5%, աշխատունակ տարիքինը՝ 63.8, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 14.7%: 2020թ. տարեսկզբի դրությամբ աշխատունակ տարիքի ամեն 1 000 մարդուն բաժին է ընկել 566 մարդ՝ 0-15 տարեկան և կենսաթոշակային տարիքի, 2019թ. նույն ժամանակահատվածում արձանագրված 552 մարդու համեմատ:

✓ As of the beginning of 2020, 21.5% was at the age of 0-15 out of the total number of permanent population of Armenia, 63.8% - at able-bodied age and 14.7% - at over able-bodied age. At the start of 2020, 566 persons at the age of 0-15 and at pension ages accounted per 1 000 population at working age, against 552 person that accounted at the beginning of 2019.

✓ Ժողովրդագրական իրավիճակի առկա հիմնախնդիրներից է բնակչության ժողովրդագրական ծերացումը, որի ընթացքը հանրապետությունում հետխորհրդային տարիներին մեծապես արագացել է: Բնակչության ծերացումը կամ

✓ One of the existing problems of demographic situation is the population ageing, the process of which was greatly accelerated in Armenia during the post-Soviet period. Population ageing or demographic ageing is the result of long-lasting

ժողովրդագրական ծերացումը երկարատև ժողովրդագրական փոփոխությունների, բնակչության վերարտադրության, ծնելիության, մահացության և դրանց հարաբերակցություններում տեղ գտած տեղաշարժերի, ինչպես նաև, մասամբ միգրացիայի հետևանք է: Ըստ ՄԱԿ-ի կողմից սահմանված ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը կազմում է 7%-ից ավելի, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող: Այդ ցուցանիշը 2020թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 12.3%:

✓ 2020թ. տարեսկզբի դրությամբ մշտական բնակչության 36.6 տոկոսը կենտրոնացված է եղել Երևան քաղաքում, իսկ ՀՀ Արարատի, ՀՀ Արմավիրի և ՀՀ Կոտայքի մարզերից յուրաքանչյուրում բնակվել է հանրապետության բնակչության 8.5%-8.9%, ՀՀ Լոռու, ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Շիրակի մարզերում, համապատասխանաբար՝ 7.2%-7.8%, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Սյունիքի և ՀՀ Տավուշի մարզերից յուրաքանչյուրում՝ 4.1%-4.6%, իսկ 1.7%՝ ՀՀ Վայոց ձորի մարզում:

### Բնակչության բնական շարժ

✓ 2019թ. ընթացքում, ըստ քաղաքացիական կացության գրանցումների, ՀՀ-ում արձանագրվել են 36 647 ծնունդ, որից 475-ը կազմել են բազմապտուղ, նրանցից՝ 458-ը՝ երկվորյակ, 17-ը՝ եռյակ: Ծնվածների ընդհանուր թվաքանակից՝ 36 041-ը կազմել են կենդանի ծնվածները, իսկ 606-ը՝ մեռելածինները: Նախորդ տարվա համեմատ կենդանի ծնվածների բացարձակ թվաքանակը նվազել է 1.5%-ով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը, որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում կենդանի ծնվածների թվաքանակը 1 000 բնակչի հաշվով, կազմել է 12.2‰, որը նախորդ տարվա արձանագրված ցուցանիշի համեմատ նվազել է 0.1 պրոմիլային կետով:

✓ 2019թ.-ին, նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է կանանց ծնելիության մակարդակի նվազում, այսպես՝ 15-49 տարիքի կանանց ծնելիության գործակիցը նվազել է 0.3 պրոմիլային կետով: Ծնելիության առանձին տարիքային խմբերում արձանագրվել են ցուցանիշների աճ, մասնավորապես՝ 20-24 (1.4 պրոմիլային կետով),25-29 (2.4 պրոմիլային կետով), 30-34 (2.1 պրոմիլային կետով) 35-39 (0.7

demographic changes, mainly changes in population reproduction, fertility, mortality and their correlations and partially it is the result of migration as well. By the demographic ageing scale set by UN, if the share of population aged 65 and over in the population structure of a country comprises more than 7%, then this population is considered to be ageing. As of the beginning of 2018, the share of RA population at age 65 and over comprised 12.3%.

✓ As of the beginning of 2020, 36.6% of permanent population was situated in city Yerevan and in each marz of the Republic such as Ararat, Armavir, Kotayk resided 8.5% - 8.9% of population of the republic, in Lori, Gegharkunik and Shirak marz - 7.2%-7.8% respectively, in Aragatsotn, Syunik and Tavush - 4.1 %- 4.6 % and in Vayots Dzor – 1.7%.

### The Vital Movement of Population

✓ According to civil registrations, 36 647 births were recorded in 2019 in RA, 475 of which were multiple births, 458- twins, 17-triplets. Live births comprise 36 041 out of the total number of births and 606 were stillbirths. As compared to the previous year the absolute number of live births decreased by 1.5%, crude birth rate, which is the number of live births per 1 000 population in the reporting period, stood at 12.2‰, which has decreased by 0.1 pro mille points against the same figure registered during the preceding year.

✓ In 2019, compared to the previous year, a decrease in fertility rate was recorded, thus the general fertility rate (of woman aged 15-49) had decreased by 0.3 pro mille points, while in some age specific fertility rates an increase was recorded, in particular, growth of indicators has been recorded for the aged at 20-24 (by 1.4 pro mille points), 25-29 (by 2.4 pro mille points), 30-34 (by 2.1 pro mille points), 35-39 (by 0.7 pro mille points), 40-44 (by 0.8 pro

պրոմիլային կետով), 40-44 (0.8 պրոմիլային կետով): Հատկանշական է, որ վերջին տարիներին արձանագրվել է 20-ից ցածր տարիքի կանանց ծնելիության տարիքային գործակցի նվազում՝ նախարդ տարվա համեմատ՝ 2.2, իսկ 2016թ.՝ 7.3 պրոմիլային կետով:

✓ 2019թ. ծնելիության գումարային գործակիցը, որը բնութագրում է երեխաների միջին թվաքանակը, որ կծնի մեկ կինն իր ծնունակ տարիքում իր ողջ կյանքի ընթացքում ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում, կազմել է 1.599 միավոր, բնակչության պարզ վերարտադրության (երբ ծնողներին փոխարինող երեխաների սերունդները հավասար են իրենց բացարձակ թվաքանակներով) համար անհրաժեշտ 2.150 միավորի համեմատ: Ընդ որում, 2019թ. քաղաքային բնակչության ծնելիության գումարային գործակիցը կազմել է 1.666, իսկ գյուղականինը՝ 1.469 երեխա:

✓ Մայրանալու միջին տարիքը 2019թ. կազմել է 27.6 տարեկան, իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 25.2 տարեկանը:

✓ Ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և հաջորդող կարգի ծնունդների մասնաբաժինը՝ ընդամենը կենդանածիններից, 2019թ. կազմել է 25.0%-ը, քաղաքներում՝22.6% և գյուղերում՝ 29.6%՝ արձանագրելով համապատասխանաբար, 2.4, 2.0 և 3.0 տոկոսային կետերով աճ 2018թ. համեմատ:

✓ 2019թ. ՀՀ-ում գրանցվել է 26 186 մահվան դեպք, իսկ մահացության ընդհանուր գործակիցը 1 000 բնակչի հաշվով կազմել է 8.8‰: 2019թ. գրանցված մահվան ընդհանուր դեպքերից 13 384-ը, կամ 51.1 %-ը կազմել են տղամարդիկ, իսկ 12 802-ը, կամ 49.9%-ը՝ կանայք: Տղամարդկանց և կանանց մահացության տարբեր մակարդակներով է պայմանավորված նաև տղամարդկանց և կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշների տարբերությունը: 2019թ.-ին տղամարդկանց կյանքի սպասվող միջին տևողությունը ծննդյան պահից կազմել է 73.1 տարի, իսկ կանանցը՝ 79.5 տարի: Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 73.2, կանանցը՝ 79.7 տարի, իսկ գյուղական բնակչության համար, համապատասխանաբար, 72.0 և 79.1 տարի:

mille points). It is noteworthy that in recent years certain decrease was recorded in the fertility rate of women under the age of 20 years, compared to previous one by 2.2 pro mille points, while by 7.3 pro mille points compared to 2016.

✓ In 2019 the total fertility rate, which is the average number of children a woman would bear in her lifetime in case of experiencing the current age-specific fertility levels throughout her reproductive years, comprised 1.599 unit, compared to 2.150, which is necessary for mere reproduction (when the cohort of children replacing parents are equal in their absolute numbers) of population. Moreover, in 2019 the total fertility rate of urban population comprised 1.666 and that of rural population – 1.469.

✓ The mean age of mother at birth was 27.6 years, while at first birth it was 25.2 years in 2019.

✓ In 2019, according to the parity of birth, the third and higher order of births comprised 25.0% out of the total number of live births, 22.6% - in urban and 29.6% - in rural settlements, recording an increase compared to the previous year by 2.4, 2.0 and 3.0 percent points, respectively.

✓ Deaths recorded in the Republic of Armenia in 2019, amounted 26 186 and the crude death rate, per 1 000 population, 8.8 pro mille. Out of the total registered deaths 13 384 or 51.1 % were men and 12 802 or 49.9 % - women, in 2019. Due to different mortality rates for men and women, the average life expectancy years for men and women are also different. In 2019 the average life expectancy at birth for men was 73.1 years and for women – 79.5 years. In the structure of urban population this indicator is 73.2 years for men and 79.7 years for women and in the structure of rural population, 72.0 and 79.1 years, respectively.

✓ Ինչպես և նախորդող տարիներին, 2019թ. ևս մահացության կառուցվածքում գերակշռել են արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններից (53.7%) և չարորակ նորագոյացություններից (20.8%) մահվան դեպքերը: 2019թ.-ին, 2018թ. համեմատ, մահացության դեպքերն ավելացել են՝ շնչառական օրգանների հիվանդություններից, մարսողական համակարգի հիվանդություններից, չարորակ նորագոյացություններից, դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից, իսկ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության դեպքերը նվազել են:

✓ As in previous years, the cases of deaths from the causes of blood circulatory system diseases (53.7%) and malignant neoplasms (20.8%) predominated in the structure of deaths in 2019. An increase of death cases recorded in 2019 caused from respiratory system diseases, digestive system diseases, malignant neoplasms, accidents, poisonings, and injuries, compared to 2018, while cases from blood circulatory system diseases had decreased.

✓ 2019թ. հանրապետությունում մանկական մահացության գործակիցը (կյանքի առաջին տարում), 1 000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 6.1‰:

✓ In 2019, infant mortality rate (during the first year of their life) was 6.1 ‰ per 1 000 live births.

✓ Հանրապետությունում արձանագրված բնակչության բնական հավելաճի ցուցանիշը 2019թ. կազմել է՝ 9 855 մարդ, իսկ բնական հավելաճի ընդհանուր գործակիցը՝ 3.4‰, 1000 բնակչի հաշվով և նախորդ տարվա համեմատ աճել է 0.3 պրոմիլային կետով:

✓ In 2019 the absolute number natural increase of population comprised 9 855 person and the crude rate of natural increase made 3.4‰, per 1 000 population, and increased by 0.3 pro mille points compared to the previous year.

### Ամուսնություններ և ամուսնալուծություններ

### Marriages and Divorces

✓ Ըստ քաղաքացիական կացության գրանցումների, 2019թ. Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ամուսնությունների 15 561 դեպք, որը 6.7%-ով գերազանցել է 2018թ. ցուցանիշը, իսկ ամուսնալուծության դեպքերը կազմել են 3880 և նվազել են 3.0%-ով:

✓ 2019թ. տղամարդկանց ամուսնության միջին տարիքը կազմել է 31.7, իսկ կանանցը՝ 28.0 տարեկանը, իսկ առաջին ամուսնության միջին տարիքը, համապատասխանաբար, 30.5 և 27.1 տարեկանը:

✓ According to civil status registrations, 15561 marriages were registered in the Republic of Amenia in 2019, which is 6.7% more than in 2018, while the number of divorces amounted 3 820 and decreased by 3.0%.

✓ In 2019 the mean age at marriage for males was 31.7 years and for females 28.0 years, in the case of first marriages, 30.5 and 27.1 years, respectively.

### Միգրացիա

### Migration

✓ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից վարվող ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի վարչական հաշվառման համաձայն, 2019թ. արձանագրվել է բնակչության տեղաշարժերի հաշվառման 48 789 և հաշվառումից դուրս գրման 41 149 գործողություն: Ներհանրապետական տեղաշարժերը կազմել են հաշվառման գործողությունների 77.9%-ը,

✓ According to the administrative records of the Information System of the RA State Population Register of the RA Passport and Visa Department, 48 789 acts of registration of population movements and 41 149 acts of de-registrations were recorded in 2018. The internal movements comprise 77.9% out of the recorded acts of registration, while of the de-registration acts it comprise 92.4%. Meanwhile, the overwhelming majority of internal and interstate

իսկ հաշվառումից հանման գործողությունների՝ 92.4%-ը: Ընդ որում, թե՛ ներհանրապետական և՛ թե միջպետական տեղաշարժերի գերակշիռ մեծամասնությունն իրականացվել է քաղաքային բնակավայրերից, համապատասխանաբար՝ 77% և 85 %:

movements were made from urban areas, namely 77% and 85%, respectively.

✓ Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով միգրացիայի մնացորդի ցուցանիշը 2019թ. գնահատվել է -15.4 հազ.մարդ, քաղաքային բնակչությանը՝ -9.6 հազ., իսկ գյուղական բնակչությանը՝ -5.8 հազար մարդ:

✓ The estimated number of population net migration for 2019 is -15.4 thousand person, according to the results of Integrated living conditions survey of households, for urban population -9.6 thousand and for rural population -5.8 thousand person.

✓ 2019թ.-ին ՀՀ կացության կարգավիճակ են ստացել 7 873 օտարերկրացիներ, այդ թվում՝ 552-ը՝ հատուկ, 2059-ը՝ մշտական և 5262-ը՝ ժամանակավոր կարգավիճակ:

✓ 7 873 foreigners had gained RA residency status in 2019, of which 552 person – Special, 2 059 – Permanent and 5 262 – Temporary status.

✓ 2019թ.-ին Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 248 անձ, փախստականի կարգավիճակ է ստացել 116-ը, իսկ 89 անձի փախստականի կարգավիճակը դադարեցվել է:

✓ In 2019, 248 person seeked asylum in the Republic of Armenia, 116 person were granted refugee status, while for 89 person the refugee status was ceased.

## 1.1 ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ [1]
## THE RA ADMINISTRATIVE-TERRITORIAL DISTRIBUTION[1]

| *Մարզեր* | Տարածքը[2], քառ. կմ Area[2], sq. km. | Բնակչության խտությունը մեկ քառ.կմ վրա[3] Population density per 1sq.km.[3] | Համայնքների քանակը Number of communities | Բնակավայրե-րի քանակը Number of Settlements | *Marzes* |
|---|---|---|---|---|---|
| Հայաստանի Հանրապետություն | **29 743** | **99** | **502** | **1 003✧** | The Republic of Armenia |
| ք. Երևան | 223 | 4861 | 1[4] | 1 | Yerevan city |
| Արագածոտն | 2 756 | 45 | 72 | 120 | Aragatsotn |
| Արարատ | 2 090 | 123 | 95 | 99 | Ararat |
| Արմավիր | 1 242 | 212 | 97 | 98 | Armavir |
| Գեղարքունիք | 5 349[5] | 43 | 57 | 98 | Gegharkunik |
| Լոռի | 3 799 | 56 | 56 | 130 | Lori |
| Կոտայք | 2 086 | 120 | 42 | 69 | Kotayk |
| Շիրակ | 2 680 | 86 | 42 | 130 | Shirak |
| Սյունիք | 4 506 | 30 | 8 | 138 | Syunik |
| Վայոց ձոր | 2 308 | 21 | 8 | 55 | Vayots Dzor |
| Տավուշ | 2 704 | 45 | 24 | 65✧ | Tavush |

[1] ՀՀ վարչատարածքային բաժանման հիմք են հանդիսանում «Հայաստանի Հանրապետության վարչա-տարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները
The basis of the administrative-territorial division of the Republic of Armenia is the RA Laws "On the Administrative-territorial Division of the Republic of Armenia" and "On local self-government in the city of Yerevan".

[2] Համաձայն Կադաստրի կոմիտեի տվյալների: / According to the data provided by the Cadastre Committee.

[3] 2020թ. հունվարի 1-ի դրությամբ / As of January 1, 2020
[4] Կազմված է 12 վարչական շրջաններից / Consists of 12 administrative districts
[5] Ներառյալ Սևանա լիճը / Including Lake Sevan

## 1.3 ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
THE FIGURES OF DE JURE POPULATION NUMBER

| Տարի<br>Year | Ընդամենը, տարեսկզբի դրությամբ, հազ.մարդ<br>Total, as of the beginning of the year, thsd.persons | այդ թվում՝<br>of which | | Տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ<br>In percents to total | |
|---|---|---|---|---|---|
| | | քաղաքային<br>urban | գյուղական<br>rural | քաղաքային<br>urban | գյուղական<br>rural |
| 1897 [1] | 798.0 | 97.0 | 701.0 | 12.2 | 87.8 |
| 1926 [1] | 881.3 | 167.1 | 714.2 | 19.0 | 81.0 |
| 1939 [1] | 1 282.3 | 366.4 | 915.9 | 28.4 | 71.6 |
| 1959 [1] | 1 765.3 | 873.1 | 892.2 | 49.5 | 50.5 |
| 1970 [1] | 2 492.6 | 1 472.7 | 1 019.9 | 59.1 | 40.9 |
| 1979 [1] | 3 037.3 | 1 985.7 | 1 051.6 | 65.4 | 34.6 |
| 1989 [1] | 3 304.8 | 2 222.3 | 1 082.5 | 67.2 | 32.8 |
| 1992 | 3 633.3 | 2 503.3 | 1 130.0 | 68.9 | 31.1 |
| 1993 | 3 463.7 | 2 358.8 | 1 104.9 | 68.1 | 31.9 |
| 1994 | 3 356.7 | 2 274.9 | 1 081.8 | 67.8 | 32.2 |
| 1995 | 3 260.3 | 2 166.4 | 1 093.9 | 66.4 | 33.6 |
| 1996 | 3 248.8 | 2 149.1 | 1 099.7 | 66.2 | 33.8 |
| 1997 | 3 246.0 | 2 138.4 | 1 107.6 | 65.9 | 34.1 |
| 1998 | 3 238.2 | 2 122.9 | 1 115.3 | 65.6 | 34.4 |
| 1999 | 3 232.1 | 2 111.6 | 1 120.5 | 65.3 | 34.7 |
| 2000 | 3 226.9 | 2 095.8 | 1 131.1 | 64.9 | 35.1 |
| 2001 | 3 215.3 | 2 076.3 | 1139.0 | 64.6 | 35.4 |
| 2001[1] | 3 213.0 | 2 066.1 | 1 146.9 | 64.3 | 35.7 |
| 2002 | 3 208.3 | 2 062.8 | 1 145.5 | 64.3 | 35.7 |
| 2003 | 3 191.2 | 2 049.1 | 1 142.1 | 64.2 | 35.8 |
| 2004 | 3 173.8 | 2 035.3 | 1 138.5 | 64.1 | 35.9 |
| 2005 | 3 156.0 | 2 020.9 | 1 135.1 | 64.0 | 36.0 |
| 2006 | 3 136.8 | 2 005.4 | 1 131.4 | 63.9 | 36.1 |
| 2007 | 3 117.4 | 1 991.7 | 1 125.7 | 63.9 | 36.1 |
| 2008 | 3 097.3 | 1 975.5 | 1 121.8 | 63.8 | 36.2 |
| 2009 | 3 076.8 | 1 958.9 | 1 117.9 | 63.7 | 36.3 |
| 2010 | 3 055.2 | 1 941.5 | 1 113.7 | 63.5 | 36.5 |
| 2011 | 3 034.5 | 1 924.8 | 1 109.7 | 63.4 | 36.6 |
| 2011[1] | 3 018.9 | 1 911.3 | 1 107.6 | 63.3 | 36.7 |
| 2012 | 3 021.4 | 1 912.7 | 1 108.7 | 63.3 | 36.7 |
| 2013 | 3 026.9 | 1 917.5 | 1 109.4 | 63.3 | 36.7 |
| 2014 | 3 017.1 | 1 914.1 | 1 103.0 | 63.4 | 36.6 |
| 2015 | 3 010.6 | 1 912.9 | 1 097.7 | 63.5 | 36.5 |
| 2016 | 2 998.6 | 1 907.0 | 1 091.6 | 63.6 | 36.4 |
| 2017 | 2 986.1 | 1 901.4 | 1 084.7 | 63.7 | 36.3 |
| 2018 | 2 972.7 | 1 895.8 | 1 076.9 | 63.8 | 36.2 |
| 2019 | 2 965.3 | 1 894.9 | 1 070.4 | 63.9 | 36.1 |
| 2020 | 2 959.7 | 1 892.1 | 1 067.6 | 63.9 | 36.1 |

[1] Ըստ մարդահամարի:
According to Population Census.

## 1. 4 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ
THE MAIN INDICATORS OF VITAL EVENTS OF POPULATION

| Տարի Year | Ընդամենը, մարդ Total, people | | | | Գործակիցը,1 000 բնակչի հաշվով, ‰ Rate, per 1 000 population, ‰ | | | Մանկական մահացության գործակիցը, 1 000 կենդանի ծնվածի հաշվով Infant mortality rate, per 1 000 live births |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծնված-ներ Births | Մահա-ցածներ Deaths | այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում of which infants under 1 year | Բնական հավելաճ Natural Increase | Ծնելիու-թյան Crude Birth | Մահա-ցության Crude Death | Բնական հավելաճի Crude Natural Increase | |
| | Ամբողջ բնակչություն Total Population | | | | | | | |
| **1985** | 80 306 | 19 581 | 1 987 | 60 725 | 24.1 | 5.9 | 18.2 | 24.8 |
| **1986** | 81 192 | 19 410 | 1 914 | 61 782 | 24.0 | 5.7 | 18.3 | 23.6 |
| **1987** | 78 492 | 19 727 | 1 790 | 58 765 | 22.9 | 5.7 | 17.2 | 22.6 |
| **1988** | 74 707 | 35 567 | 1 911 | 39 140 | 21.6 | 10.3 | 11.3 | 25.3 |
| **1989** | 75 250 | 20 853 | 1 534 | 54 397 | 21.6 | 6.0 | 15.6 | 20.4 |
| **1990** | 79 882 | 21 993 | 1 465 | 57 889 | 22.5 | 6.2 | 16.3 | 18.5 |
| **1991** | 77 825 | 23 425 | 1 404 | 54 400 | 21.6 | 6.5 | 15.1 | 17.9 |
| **1992** | 70 581 | 25 824 | 1 336 | 44 757 | 19.9 | 7.3 | 12.6 | 18.5 |
| **1993** | 59 041 | 27 500 | 1 048 | 31 541 | 17.3 | 8.1 | 9.2 | 17.1 |
| **1994** | 51 143 | 24 652 | 772 | 26 491 | 15.5 | 7.5 | 8.0 | 14.7 |
| **1995** | 48 960 | 24 842 | 697 | 24 118 | 15.0 | 7.6 | 7.4 | 14.2 |
| **1996** | 48 134 | 24 936 | 747 | 23 198 | 14.8 | 7.7 | 7.1 | 15.5 |
| **1997** | 43 929 | 23 985 | 678 | 19 944 | 13.5 | 7.4 | 6.1 | 15.4 |
| **1998** | 39 366 | 23 210 | 580 | 16 156 | 12.2 | 7.2 | 5.0 | 14.7 |
| **1999** | 36 502 | 24 087 | 572 | 12 415 | 11.3 | 7.5 | 3.8 | 15.4 |
| **2000** | 34 276 | 24 025 | 540 | 10 251 | 10.6 | 7.5 | 3.1 | 15.6 |
| **2001** | 32 065 | 24 003 | 497 | 8 062 | 10.0 | 7.5 | 2.5 | 15.4 |
| **2002** | 32 229 | 25 554 | 450 | 6 675 | 10.1 | 8.0 | 2.1 | 14.0 |
| **2003** | 35 793 | 26 014 | 422 | 9 779 | 11.3 | 8.2 | 3.1 | 12.0 |
| **2004** | 37 520 | 25 679 | 430 | 11 841 | 11.8 | 8.1 | 3.7 | 11.6 |
| **2005** | 37 499 | 26 379 | 460 | 11 120 | 11.9 | 8.4 | 3.5 | 12.3 |
| **2006** | 37 639 | 27 202 | 523 | 10 437 | 12.0 | 8.7 | 3.3 | 13.9 |
| **2007** | 40 105 | 26 830 | 433 | 13 275 | 12.9 | 8.6 | 4.3 | 10.9 |
| **2008** | 41 185 | 27 412 | 442 | 13 773 | 13.3 | 8.9 | 4.4 | 10.8 |
| **2009** | 44 413 | 27 560 | 454 | 16 853 | 14.5 | 9.0 | 5.5 | 10.4 |
| **2010** | 44 825 | 27 921 | 512 | 16 904 | 14.7 | 9.2 | 5.5 | 11.4 |
| **2011** | 43 340 | 27 963 | 507 | 15 377 | 14.3 | 9.2 | 5.1 | 11.6 |
| **2012** | 42 480 | 27 599 | 458 | 14 881 | 14.0 | 9.1 | 4.9 | 10.8 |
| **2013** | 41 790 | 27 196 | 407 | 14 594 | 13.8 | 9.0 | 4.8 | 9.7 |
| **2014** | 43 031 | 27 714 | 376 | 15 317 | 14.3 | 9.2 | 5.1 | 8.8 |
| **2015** | 41 763 | 27 878 | 370 | 13 885 | 13.9 | 9.3 | 4.6 | 8.8 |
| **2016** | 40 592 | 28 226 | 352 | 12 366 | 13.5 | 9.4 | 4.1 | 8.6 |
| **2017** | 37 700 | 27 157 | 311 | 10 543 | 12.6 | 9.1 | 3.5 | 8.2 |
| **2018** | 36 574 | 25 751 | 261 | 10 823 | 12.3 | 8.7 | 3.6 | 7.1 |
| **2019** | 36 041 | 26 186 | 219 | 9 855 | 12.2 | 8.8 | 3.4 | 6.1 |

1.4 (շարունակություն) 1.4 (continued)

| Տարի Year | Ընդամենը, մարդ Total, people | | | | Գործակիցը, 1 000 բնակչի հաշվով,‰ Rate, per 1 000 population, ‰ | | | Մանկական մահացության գործակիցը, 1 000 կենդանի ծնվածի հաշվով Infant mortality rate, per 1 000 live births |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծնված-ներ Births | Մահա-ցածներ Deaths | այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում of which infants under 1 year | Բնական հավելաճ Natural Increase | Ծնելիու-թյան Crude Birth | Մահա-ցության Crude Death | Բնական հավելաճի Crude Natural Increase | |
| **Քաղաքային բնակչություն Urban Population** | | | | | | | | |
| **1985** | 49 278 | 12 075 | 1 161 | 37 203 | 21.8 | 5.3 | 16.5 | 23.6 |
| **1986** | 50 124 | 11 936 | 1 080 | 38 188 | 21.8 | 5.2 | 16.6 | 21.6 |
| **1987** | 47 711 | 12 425 | 1 063 | 35 286 | 20.4 | 5.3 | 15.1 | 22.1 |
| **1988** | 47 639 | 26 741 | 1 299 | 20 898 | 20.2 | 11.3 | 8.9 | 27.1 |
| **1989** | 47 871 | 13 718 | 947 | 34 153 | 20.0 | 5.7 | 14.3 | 19.7 |
| **1990** | 50 144 | 14 701 | 943 | 35 443 | 20.5 | 6.0 | 14.5 | 19.0 |
| **1991** | 48 439 | 15 777 | 912 | 32 662 | 19.5 | 6.3 | 13.2 | 18.7 |
| **1992** | 43 972 | 17 431 | 858 | 26 541 | 18.1 | 7.2 | 10.9 | 19.2 |
| **1993** | 35 316 | 18 555 | 655 | 16 761 | 15.2 | 8.0 | 7.2 | 18.0 |
| **1994** | 29 958 | 16 725 | 468 | 13 233 | 13.5 | 7.5 | 6.0 | 15.3 |
| **1995** | 29 131 | 16 763 | 440 | 12 368 | 13.5 | 7.8 | 5.7 | 15.1 |
| **1996** | 29 388 | 16 481 | 533 | 12 907 | 13.7 | 7.7 | 6.0 | 18.1 |
| **1997** | 26 904 | 15 783 | 487 | 11 121 | 12.6 | 7.4 | 5.2 | 18.1 |
| **1998** | 24 535 | 15 474 | 428 | 9 061 | 11.6 | 7.3 | 4.3 | 17.4 |
| **1999** | 22 458 | 15 834 | 373 | 6 624 | 10.7 | 7.5 | 3.2 | 16.4 |
| **2000** | 21 390 | 15 682 | 357 | 5 708 | 10.3 | 7.5 | 2.8 | 16.6 |
| **2001** | 20 328 | 15 654 | 333 | 4 674 | 9.8 | 7.6 | 2.2 | 16.3 |
| **2002** | 20 804 | 16 737 | 300 | 4 067 | 10.1 | 8.1 | 2.0 | 14.5 |
| **2003** | 22 629 | 16 870 | 311 | 5 759 | 11.1 | 8.3 | 2.8 | 13.9 |
| **2004** | 23 628 | 16 531 | 311 | 7 097 | 11.7 | 8.2 | 3.5 | 13.2 |
| **2005** | 23 762 | 17 128 | 351 | 6 634 | 11.8 | 8.5 | 3.3 | 14.8 |
| **2006** | 23 793 | 17 689 | 389 | 6 104 | 11.9 | 8.9 | 3.0 | 16.4 |
| **2007** | 25 519 | 17 213 | 315 | 8 306 | 12.9 | 8.7 | 4.2 | 12.4 |
| **2008** | 26 176 | 17 451 | 312 | 8 725 | 13.3 | 8.9 | 4.4 | 12.0 |
| **2009** | 28 260 | 17 433 | 269 | 10 827 | 14.5 | 8.9 | 5.6 | 9.6 |
| **2010** | 28 263 | 17 838 | 318 | 10 425 | 14.6 | 9.2 | 5.4 | 11.3 |
| **2011** | 27 613 | 17 832 | 313 | 9 781 | 14.4 | 9.3 | 5.1 | 11.3 |
| **2012** | 27 123 | 17 603 | 288 | 9 520 | 14.2 | 9.2 | 5.0 | 10.6 |
| **2013** | 26 798 | 17 393 | 256 | 9 405 | 14.0 | 9.1 | 4.9 | 9.5 |
| **2014** | 27 874 | 17 647 | 238 | 10 227 | 14.6 | 9.2 | 5.4 | 8.6 |
| **2015** | 27 124 | 17 743 | 233 | 9 381 | 14.2 | 9.3 | 4.9 | 8.6 |
| **2016** | 26 474 | 18 257 | 201 | 8 217 | 13.9 | 9.6 | 4.3 | 7.6 |
| **2017** | 24 611 | 17 418 | 178 | 7 193 | 13.0 | 9.2 | 3.8 | 7.2 |
| **2018** | 24 259 | 16 687 | 162 | 7 572 | 12.8 | 8.8 | 4.0 | 6.7 |
| **2019** | 23 704 | 16 908 | 123 | 6 796 | 12.5 | 8.9 | 3.6 | 5.2 |

1.4 (շարունակություն) 1.4 (continued)

| Տարի<br>Year | Ընդամենը, մարդ<br>Total, people | | | | Գործակիցը,1000 բնակչի հաշվով,‰<br>Rate, per 1000 population, ‰ | | | Մանկական մահացության գործակիցը, 1 000 կենդանի ծնվածի հաշվով<br>Infant mortality rate, per 1 000 live births |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծնված-ներ<br>Births | Մահա-ցածներ<br>Deaths | այդ թվում՝ մինչև 1 տարեկան հասակում<br>of which infants under 1 year | Բնական հավելաճ<br>Natural Increase | Ծնելիու-թյան<br>Crude Birth | Մահա-ցության<br>Crude Death | Բնական հավելաճի<br>Crude Natural Increase | |
| Գյուղական բնակչություն<br>Rural Population | | | | | | | | |
| **1985** | 31 028 | 7 506 | 826 | 23 522 | 28.8 | 7.0 | 21.8 | 26.7 |
| **1986** | 31 068 | 7 474 | 834 | 23 594 | 28.7 | 6.9 | 21.8 | 26.9 |
| **1987** | 30 781 | 7 302 | 727 | 23 479 | 28.2 | 6.7 | 21.5 | 23.5 |
| **1988** | 27 068 | 8 826 | 612 | 18 242 | 24.7 | 8.1 | 16.6 | 22.2 |
| **1989** | 27 379 | 7 135 | 587 | 20 244 | 25.3 | 6.6 | 18.7 | 21.4 |
| **1990** | 29 738 | 7 292 | 522 | 22 446 | 27.0 | 6.7 | 20.3 | 18.0 |
| **1991** | 29 386 | 7 648 | 492 | 21 738 | 26.3 | 6.9 | 19.4 | 16.7 |
| **1992** | 26 609 | 8 393 | 478 | 18 216 | 23.8 | 7.5 | 16.3 | 17.4 |
| **1993** | 23 725 | 8 945 | 393 | 14 780 | 21.7 | 8.2 | 13.5 | 15.9 |
| **1994** | 21 185 | 7 927 | 304 | 13 258 | 19.5 | 7.3 | 12.2 | 13.9 |
| **1995** | 19 829 | 8 079 | 257 | 11 750 | 18.1 | 7.4 | 10.7 | 13.0 |
| **1996** | 18 746 | 8 455 | 214 | 10 291 | 17.0 | 7.7 | 9.3 | 11.4 |
| **1997** | 17 025 | 8 202 | 191 | 8 823 | 15.3 | 6.9 | 8.4 | 11.2 |
| **1998** | 14 831 | 7 736 | 152 | 7 095 | 13.3 | 7.3 | 6.0 | 10.3 |
| **1999** | 14 044 | 8 253 | 199 | 5 791 | 12.5 | 7.4 | 5.1 | 13.9 |
| **2000** | 12 886 | 8 343 | 183 | 4 543 | 11.4 | 7.3 | 4.1 | 13.9 |
| **2001** | 11 737 | 8 349 | 164 | 3 388 | 10.3 | 7.3 | 3.0 | 13.7 |
| **2002** | 11 425 | 8 817 | 150 | 2 608 | 10.0 | 7.7 | 2.3 | 13.0 |
| **2003** | 13 164 | 9 144 | 111 | 4 020 | 11.5 | 8.0 | 3.5 | 8.8 |
| **2004** | 13 892 | 9 148 | 119 | 4 744 | 12.2 | 8.0 | 4.2 | 8.7 |
| **2005** | 13 737 | 9 251 | 109 | 4 486 | 12.1 | 8.2 | 3.9 | 7.9 |
| **2006** | 13 846 | 9 513 | 134 | 4 333 | 12.2 | 8.4 | 3.8 | 9.7 |
| **2007** | 14 586 | 9 617 | 118 | 4 969 | 13.0 | 8.6 | 4.4 | 8.2 |
| **2008** | 15 009 | 9 961 | 130 | 5 048 | 13.4 | 8.9 | 4.5 | 8.7 |
| **2009** | 16 153 | 10 127 | 185 | 6 026 | 14.5 | 9.1 | 5.4 | 11.7 |
| **2010** | 16 562 | 10 083 | 194 | 6 479 | 14.9 | 9.1 | 5.8 | 11.8 |
| **2011** | 15 727 | 10 131 | 194 | 5 596 | 14.2 | 9.1 | 5.1 | 12.2 |
| **2012** | 15 357 | 9 996 | 170 | 5 361 | 13.8 | 9.0 | 4.8 | 11.0 |
| **2013** | 14 992 | 9 803 | 151 | 5 189 | 13.6 | 8.9 | 4.7 | 10.1 |
| **2014** | 15 157 | 10 067 | 138 | 5 090 | 13.8 | 9.2 | 4.6 | 9.1 |
| **2015** | 14 639 | 10 135 | 137 | 4 504 | 13.4 | 9.3 | 4.1 | 9.3 |
| **2016** | 14 118 | 9 969 | 151 | 4 149 | 13.0 | 9.2 | 3.8 | 10.6 |
